ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

«18» 05 2026թ. № 19/1025

«ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԷԼԲԵԿԻ» Ա/Ձ
/ՀՎՀՀ՝ 40152052, հասցե՝ ք. Երևան, Արամի փ., շ. 74, բն. 60/

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ տիկին Հովսեփյան,

ՀՀ պետական պահպանության ծառայության 2026 թվականի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով՝ ՀՀ պետական պահպանության ծառայության /այսուհետ՝ Ծառայություն/ և «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի /այսուհետ՝ Վաճառող/ միջև կնքվել է ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/11-2 ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/՝ 1,485,300.00 /մեկ միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2026 թվականի ապրիլի 27-ը, այդ թվում՝

3-րդ չափաբաժին՝ գլխարկներ,

4-րդ չափաբաժին՝ փողկապներ,

8-րդ չափաբաժին՝ թևքանշան և այլ պարագաներ,

9-րդ չափաբաժին՝ աստղ:

Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը չի իրականացվել, ինչի արդյունքում Վաճառողը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Հասցե՝ ք. Երևան, Պռոշյան փողոց 1-ին փակուղի, 20 շենք
Հեռ./ֆաքս 010 532 561

Միաժամանակ, Ծառայությունը, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետը, Վաճառողին նախապես սահմանել է ապրանքների մատակարարման նոր և վերջնական ժամկետ՝ մինչև 2026 թվականի մայիսի 13-ը ներառյալ՝ առաջարկելով մինչև նշված վերջնաժամկետը ապահովել Պայմանագրով նախատեսված ապրանքների ամբողջական և պատշաճ մատակարարումը: Վաճառողը նաև տեղեկացվել է, որ նշված ժամկետում ապրանքները չմատակարարելու դեպքում Ծառայությունը կձեռնարկի Պայմանագրով նախատեսված միջոցները, այդ թվում՝ Պայմանագրի 2.1.1, 2.1.7 և 2.1.7.1 կետերի հիմքով միակողմանի կարգով կլուծի Պայմանագիրը:

Վաճառողի կողմից Պայմանագրի 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները մատակարարվել են միայն Ծառայության կողմից նոր և վերջնական ժամկետ սահմանելու մասին ծանուցումից հետո, իսկ Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ գլխարկները, մինչև 2026 թվականի մայիսի 13-ը ներառյալ չի մատակարարվել:

Հետևաբար, 2026 թվականի մայիսի 14-ի դրությամբ Վաճառողի կողմից չի կատարվել Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի՝ գլխարկների մատակարարման պարտավորությունը՝ ինչպես Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված սկզբնական մատակարարման ժամկետում, այնպես էլ Ծառայության կողմից սահմանված նոր և վերջնական ժամկետում:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, կամ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ՝ կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն չի մատակարարել Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ գլխարկները, ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավելի, ինչպես նաև չի ապահովել ապրանքի մատակարարումը Ծառայության կողմից սահմանված նոր և վերջնական ժամկետում՝ մինչև 2026 թվականի մայիսի 13-ը ներառյալ, Ծառայությունը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, ինչպես նաև Պայմանագրի 2.1.1, 2.1.7 և 2.1.7.1 կետերով, 2026 թվականի մայիսի 14-ի դրությամբ միակողմանի հրաժարվում է Պայմանագրի կատարումից մասնակի՝ միայն 3-րդ չափաբաժնի՝ գլխարկների մասով, համարելով Պայմանագիրը նշված մասով լուծված:

Պայմանագրի 4-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով Պայմանագիրը համարվում է կատարված՝ դրանց փաստացի և պատշաճ մատակարարման չափով, իսկ սույն ծանուցմամբ Պայմանագիրը լուծվում է միայն 3-րդ չափաբաժնի՝ գլխարկների մասով:

Միաժամանակ, համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 /զրո ամբողջ հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով:

Հաշվի առնելով, որ Վաճառողի կողմից չի մատակարարվել Պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ գլխարկները, որի ընդհանուր արժեքը կազմում է 1,080,000 /մեկ միլիոն ութսուն հազար/ ՀՀ դրամ, Վաճառողը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 6,480 /վեց հազար չորս հարյուր ութսուն/ ՀՀ դրամ տույժի գումարը՝ հաշվարկված մինչև 2026 թվականի մայիսի 14-ը ներառյալ՝ 12 աշխատանքային օրվա համար:

Հասցե՝ ք. Երևան, Պռոշյան փողոց 1-ին փակուղի, 20 շենք
Հեռ./ֆաքս 010 532 561

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն նրան սպասարկող բանկ՝ ապահովումների գումարների գանձման նպատակով:

Պայմանագրի մասնակի միակողմանի լուծման մասին պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվում են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11 կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում՝ սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը /ծանուցումը/ հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման գումարը, ապա

Հասցե՝ ք. Երևան, Պռոշյան փողոց 1-ին փակուղի, 20 շենք
Հեռ./ֆաքս 010 532 561

պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հարգանքով՝

ԱՐԹՈՒՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ՝

Կատարող՝ Կարեն Գասպարյան
010532358